

**«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

“Հաստատում եմ”

Բուհի ռեկտոր, Բ.Գ.Պ.

_____ Խաչատրյան Գ.Կ.

“_30_” ___09_ 2014թ.

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ _7_

“_25_” ___09_ 2014թ.

(կազմը փոփ. 03.10.2016թ. թիվ 842 Լ/Կ հրամանով)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ ՎՊՀ) գիտական խորհրդի կազմի ձևավորման և գործունեության կարգը, նիստերի նախապատրաստման և անցկացման, որոշումների ընդունման ընթացակարգը:
2. Գիտական խորհուրդը լուծում է ՎՊՀ-ի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը:
3. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Իրավական ակտերի մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, ՎՊՀ-ի կանոնադրությունը:
4. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են գիտական խորհրդի կողմից:

II. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

5. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորները, գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար), գլխավոր հաշվապահը, իրավաբանական բաժնի պետ, ֆակուլտետների ղեկավանները, ռեկտորի նշանակմամբ՝ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև ընտրովի անդամներ՝ գիտական խորհրդի կանոնակարգին համապատասխան: ՎՊՀ-ի գիտական խորհրդի անդամների թվի քսանհինգ տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրում են համապատասխան ֆակուլտետների ուսանողական խորհուրդները, իսկ ընտրությունն իրականացնում է ՎՊՀ-ի ուսանողական խորհուրդը:

(5-րդ կետը խմբ. 03.10.2016թ. թիվ 842 Լ/Կ հրամանով)

6. Գիտական խորհրդի կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով՝ հինգ տարի ժամկետով: Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը 40 է, որի առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են:

(6-րդ կետը փոփ. 03.10.2016թ. թիվ 842 Լ/Կ հրամանով)

7. Գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրումն իրականացնում է համապատասխան ուսանողական խորհուրդը, իսկ ընտրությունն իրականացնում է ՎՊՀ ուսանողական խորհուրդը՝ իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

III. ՎՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. ՎՊՀ-ի գիտական խորհուրդը ռեկտորի նախագահությամբ գործող՝ համալսարանի ուսումնական, գիտական և գիտատեխնիկական

գործունեությունը համակարգող ու կարգավորող կոլեգիալ կառավարման մարմին է: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

9. Գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգը,

2) ՎՊՀ-ի գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ լիազոր մարմին է ներկայացնում առաջարկություններ ՎՊՀ-ի գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ,

3) քննարկում է ՎՊՀ-ի գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ համալսարանում կատարվող կարևորագույն գիտահետազոտական ու գիտամեթոդական աշխատանքների մասին,

4) հաստատում է ֆակուլտետների դեկանների ու ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգը և ժամկետները,

5) իրականացնում է ՎՊՀ-ի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված՝ սույն կանոնակարգից բխող այլ լիազորություններ,

6) ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ՎՊՀ-ի կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ, հաստատում է ՎՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, ներքին կարգապահական կանոնները, ուսումնական գործընթացը կանոնակարգող այլ ներքին իրավական ակտեր,

7) քննարկում է ՎՊՀ-ի ուսումնական մասնագիտությունների ու մասնագիտացումների անվանացանկերը, հաստատում է ուսումնական պլաններն ըստ մասնագիտությունների,

8) ընդունում է համալսարանի պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, համալսարանի շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածություններ ներկայացնելու մասին որոշումներ,

9) հատկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում, ՎՊՀ-ի ռեկտորի ներկայացմամբ, հաստատում է վճարովի հիմունքներով ըստ մասնագիտությունների ընդունելության տեղերի նախագծերը, ինչպես նաև՝ ուսման վարձավճարների չափերը,

10) ներկայացնում է առաջարկություններ ՎՊՀ-ի տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ,

11) անհրաժեշտության դեպքում ստեղծում է հանձնաժողովներ՝ սահմանելով դրանց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունը, աշխատանքի կարգը,

12) ռեկտորի ներկայացմամբ՝ որոշում է ստեղծել, վերակազմակերպել, լուծարել ֆակուլտետներ, կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ, ինչպես նաև ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ,

13) շնորհում է գիտական կոչումներ և հաստատում գիտամանկավարժական համակազմի պաշտոնների տեղակալման մրցույթների արդյունքները,

14) իրականացնում է ՎՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունը սահմանված կանոնակարգով,

15) քննարկում է ռազմավարական ծրագրերի նախագծերը և դրանք ներկայացնում ՎՊՀ-ի խորհրդին,

16) կրթության պետական կառավարման լիազորված մարմին է ներկայացնում նոր մասնագիտությունների գծով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ,

17) իրականացնում է ՎՊՀ-ի կանոնադրությունից բխող՝ ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ,

18) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները,

19) որոշում է ընդունում այլ հարցերի շուրջ,

20) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

10. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավագործ՝ նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում, իսկ որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

IV. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Գիտական խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:

12. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ) և ՎՊՀ-ի գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար):

13. Գիտական խորհրդի քարտուղարը, գիտական խորհրդի նիստ (հերթական կամ արտահերթ) հրավիրելու և նիստի օրակարգի մասին գրավոր ծանուցում է գիտական խորհրդի անդամներին հերթական նիստի անցկացման օրվանից առնվազն 10 օր առաջ, արտահերթ նիստի անցկացման օրվանից առնվազն 5 օր առաջ: Գիտական խորհրդի տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ փաստաթղթային փաթեթը (որոշումների նախագծեր, տեղեկանք-

հիմնավորումներ և այլն) տեղադրվում համակարգչային ներքին ցանցում՝ վարչական>գիտ. թղթապանակ > Գիտխորհուրդ): Առաջարկները պետք է ներկայացնել գիտական խորհրդի քարտուղարին, գրավոր՝ գիտխորհրդի նիստից 3 օր առաջ:

14. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ գիտական խորհրդի նախագահի կողմից կամ գիտական խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով՝ նրանց կողմից առաջարկված օրակարգով և ժամկետներում:

15. Գիտական խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է գիտական քարտուղարը՝ նիստն սկսվելուց առաջ: Քվորումը չապահովելու դեպքում նիստը հետաձգվում է:

16. Գիտական խորհրդի քվորումի բացակայության պատճառով հետաձգված նիստը՝ նույն օրակարգով, գումարվում է սույն կանոնակարգով սահմանված ընդհանուր հիմունքներով:

17. Ռեկտորը, բացելով գիտական խորհրդի նիստը, տեղեկատվություն է տրամադրում քվորումի առկայության վերաբերյալ և քվեարկության է դնում նիստի օրակարգը:

18. Գիտական խորհրդի անդամները կարող են առաջարկել նիստի օրակարգում ընդգրկել այլ հարցեր, ինչը սահմանված կարգով դրվում է քվեարկության:

19. Նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ինչպես նաև էլույթների տևողությունը որոշում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ:

20. Գիտական խորհրդի կամ նրա նախագահի որոշմամբ անհրաժեշտության դեպքում նիստին կարող են հրավիրվել փորձագետներ՝ համապատասխան խորհրդատվության համար:

21. Գիտական խորհրդի նախագահը.

- 1) վարում է գիտական խորհրդի նիստը,
- 2) հաստատման է ներկայացնում գիտական խորհրդի աշխատանքային պլանը՝ ըստ ուսումնական տարվա կիսամյակների,
- 3) սահմանում է ժողովակարգը,
- 4) սահմանում է էլույթների հերթականությունը՝ ըստ օրակարգի,
- 5) ներկայացված առաջարկությունները դնում է քվեարկության՝ ըստ հերթականության,
- 6) կազմակերպում է քվեարկությունը և ձայների հաշվառումը,
- 7) ապահովում է գիտական խորհրդի որոշումների կատարումը,
- 8) կազմակերպում է գիտական խորհրդի աշխատանքները,
- 9) քվեարկում է խորհրդի անդամների հետ՝ ըստ կարգի (դեմ, կողմ, ձեռնպահ),

22. Գիտական խորհրդի բոլոր անդամները պարտավոր են մասնակցելու գիտական խորհրդի նիստերին: Իր մասնակցելու անհնարինության դեպքում

գիտական խորհրդի անդամը պարտավոր է տեղեկացնել գիտական խորհրդի նախագահին կամ գիտական քարտուղարին:

23. Գիտական խորհրդի նիստում նախատեսվում են ելույթների հետևյալ տեսակները՝ զեկուցում, հարակից զեկուցում, ելույթներ՝ քննարկվող հարցի շուրջ կամ քննարկվող թեկնածությունների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ, հայտարարություններ և դիմումներ: Գիտական խորհրդի անդամը տվյալ նիստում կոնկրետ հարցի վերաբերյալ ելույթ է ունենում մեկ անգամ:

24. Գիտական խորհրդի ներկա անդամների մեծամասնության համաձայնությամբ նախագահողը որոշում է օրակարգի հարցի քննարկման, հարցերի և պատասխանների ընդհանուր ժամանակը՝ անհրաժեշտության դեպքում երկարացնելով այն:

25. Անդամները ելույթ են ունենում ամբիոնից կամ դահլիճում իրենց զբաղեցրած տեղից:

26. Սահմանված ժամանակում ելույթը չավարտվելու դեպքում գիտական խորհուրդը կարող է ելույթ ունեցողին տրամադրել լրացուցիչ ժամանակ:

27. Չի թույլատրվում ելույթներում գործածել վիրավորական արտահայտություններ:

28. Ոչ ոք իրավունք չունի առանց նախագահողի կամ գիտական խորհրդի թույլտվության ելույթ ունենալու:

29. Եթե ժամանակի սղության պատճառով գիտական խորհրդի որևէ անդամ չի կարողանում ելույթ ունենալ, նա իրավունք ունի իր ելույթը գրավոր ներկայացնել նիստի արձանագրությանը կցելու համար:

30. Քննարկվող հարցի վերաբերյալ մտքերի փոխանակումը կարող է դադարեցվել սահմանված ժամանակի սպառմամբ կամ գիտական խորհրդի որոշմամբ (ներկա անդամների ձայների մեծամասնությամբ):

31. Նրանք, ովքեր քննադատվել են ելույթներում, իրավունք ունեն պատասխան խոսքով հանդես գալու:

V. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

32. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են նիստում բաց կամ փակ (զաղտնի) քվեարկությամբ: Փակ (զաղտնի) քվեարկությունը իրականացվում է քվեաթերթիկներով:

33. Բաց քվեարկության յուրաքանչյուր հարցի կապակցությամբ գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի ձայնի միայն մեկ իրավունք՝ քվեարկելու «կողմ», «դեմ», «ձեռնպահ»:

34. Գիտական խորհրդի անդամը անձամբ է իրականացնում իր ձայնի իրավունքը: Քվեարկությանը իրավունք ունեն մասնակցելու միայն գիտական խորհրդի նիստին ներկա անդամները:

35. Քվորումի բացակայության դեպքում նախագահողը քվեարկությունը տեղափոխում է հաջորդ նիստ:

36. Բաց քվեարկությունն անցկացվում է ձեռք բարձրացնելով: Ձայների հաշվառումը կատարում են նախագահը կամ հաշվիչ հանձնաժողովի անդամները:

37. Նախագահողը ձայները հաշվելուց հետո հայտարարում է՝ որոշումն ընդունված է, թե ոչ:

38. Եթե պարզվում է, որ թույլ են տրվել քվեարկության արարողակարգի խախտումներ, ապա գիտական խորհրդի որոշմամբ կատարվում է կրկնակի քվեարկություն:

39. Բաց քվեարկությունից առաջ նախագահողը հայտարարում է քվեարկության դրվող առաջարկությունների քանակը՝ ճշտելով նրանց ձևակերպումները և հաջորդականությունը:

40. Քվեարկությունն սկսելուց հետո ոչ ոք իրավունք չունի ընդհատելու այն՝ բացի վարման կարգի վերաբերյալ հայտարարություններից:

41. Գաղտնի քվեարկությունն անցկացվում է տվյալ պաշտոնը մրցութային կարգով զբաղեցնելու և գիտական կոչումներ շնորհելու դեպքում՝ համաձայն «ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՃ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ» կանոնակարգի:

VI. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

42. Գիտական խորհրդի որոշումները կիրարկվում են ռեկտորի հրամաններով:

43. Ռեկտորն իրավասու է կասեցնելու գիտական խորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում նրա լիազորություններից, հակասում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, ՎՊՀ կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներքին իրավական այլ ակտերին:

44. Գիտական խորհրդի այն որոշումները, որոնք ռեկտորի կողմից կասեցվել են ընդունման ընթացքում ընթացակարգային խախտումներ թույլտրվելու պատճառով, դրվում են վերաքննարկման և վերաքվեարկության գիտական խորհրդի նույն կամ այլ նիստում:

45. Գիտական խորհրդի որոշումների կասեցման մասին ռեկտորի հրամանները պետք է լինեն հիմնավոր և պատճառաբանված:

VII. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

46. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը կազմում է գիտական քարտուղարը գիտական խորհրդի նիստն ավարտվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Արձանագրությունը ստորագրում են գիտական խորհրդի նախագահը և գիտական քարտուղարը:

47. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ամսաթիվը, նախագահը, քարտուղարը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի բովանդակությունը, քվեարկության արդյունքները և գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները:

VIII. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

48. Գիտական խորհրդի որոշմամբ, ըստ անհրաժեշտության կարող են ստեղծվել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ (մրցութային, փորձագիտական և այլն), որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունը և աշխատակարգը սահմանվում են գիտական խորհրդի կողմից:

49. Հանձնաժողովի կազմում ընտրվում են ՎՊՀ-ի գիտական խորհրդի անդամներ, պրոֆեսորադասախոսական կազմի բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ստորաբաժանումների աշխատակիցներ և ուսանողներ:

50. Հանձնաժողովների խնդիրն է՝ իրենց կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկության ներկայացումը:

51. Հանձնաժողովների կառուցվածքը և կազմը որոշում է գիտական խորհուրդը:

52. Հանձնաժողովներն իրենց ոլորտին վերաբերող հարցերը քննարկում են գիտական խորհրդի և/կամ ռեկտորի հանձնարարությամբ:

53. Հանձնաժողովներն իրավասու են ՎՊՀ կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր ու նյութեր:

54. Հանձնաժողովների նիստերն իրավագոր են հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:

55. Համահամալսարանական հանձնաժողովների փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

56. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել գիտական խորհրդին:

57. Մշտական հանձնաժողովները գործում են մինչև գիտական խորհրդի լիազորությունների ավարտը, իսկ ժամանակավոր հանձնաժողովները՝ մինչև տվյալ կոնկրետ հարցին վերջնական լուծում տալը, որից հետո, լիազորությունները դադարեցվում են գիտական խորհրդի որոշմամբ:

58. Հանձնաժողովները գործում են անկախ, իրենց նախագահի ներկայացմամբ՝ գիտական խորհրդի հաստատած աշխատանքային պլանի համաձայն:

59. Հանձնաժողովը գործում է գիտական խորհրդի կողմից հաստատված իր կանոնակարգի հիման վրա:

60. Հանձնաժողովի կողմից որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ և ունեն խորհրդատվական բնույթ:

61. Կատարած աշխատանքների կապակցությամբ հանձնաժողովը տարեկան հաշվետվություն է ներկայացնում գիտական խորհրդին: